



ԵՅԳԾ Տեղեկագիր

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների
ծրագրի եռամսյակային հրատարակություն



№ 3 (8)
2009թ. հունիս - սեպտեմբեր



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ԵՅԳԾ-ն ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորված ծրագիր է, որը մեկնարկել է 2004թ. հոկտեմբերին: Ծրագիրը գործում է Հայաստանի 80 համայնքներում եւ նպատակ ունի խթանելու քաղաքացիների մասնակցությունը հանրային հարցերի լուծման գործում: Ծրագրի շրջանակներում համայնքներին տրամադրվում է կազմակերպչական աջակցություն Երիտասարդական գործունեության ակումբներ (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովներ (ՀԳՀ) հիմնադրելու համար: ԵՅԳԾ-ն ֆինանսավորում է նաև տրամադրում համայնքների կողմից նախաձեռնվող եւ իրականացվող ծրագրերի համար: Սույն տեղեկագրում նկարագրված նախաձեռնությունները կազմակերպվել են համայնքների կողմից եւ ֆինանսավորվել են տեղական տարբեր հովանավորների կամ դոնոր կազմակերպությունների կողմից:

Վերապահում. սույն տեղեկագրի տպագրումը հնարավոր է դարձել ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ՝ Կրթության զարգացման ակադեմիայի կողմից իրականացվող Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագրի շրջանակներում: Սույն տեղեկագրի մեջ արտահայտված տեսակետները եւ կարծիքները պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ կառավարության կամ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետները:

ԵՅԳԾ Համաժողով 2009

ԵՅԳԾ համայնքների քաղաքացիական գործողությունների 3-րդ ամենամյա համաժողովը տեղի ունեցավ ս.թ. սեպտեմբերի 23-25-ը, ք. Ծաղկաձորում: Համաժողովի մասնակիցներն էին թվով 160 ներկայացուցիչներ ԵՅԳԾ բոլոր 80 քաղաքացիական խմբերից, որոնք հավաքվել էին քննարկելու ընդհանուր խնդիրներ եւ հարցեր, կիսելու իրենց փորձը եւ քաղված դասերը, խթանելու համագործակցությունը եւ ավելի սերտ աշխատանքային հարաբերություններ հաստատելու հանրապետությունում գործող քաղաքացիական խմբերի մոտ: Համաժողովի բացման արարողությանը ներկա էին Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչը, ԱՄՆ ՄՁԳ/Հայաստանյան առաքելության, Կրթության զարգացման ակադեմիայի, Հայաստանի Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, տեղական ԴԿ-ների ներկայացուցիչներ եւ Հայաստանի 10 մարզերից ժամանած ԵՅԳԾ 80 համայնքների անդամներ: Դեսպան Յովանովիչը իր բացման խոսքում շեշտեց քաղաքացիական շահերի պաշտպանությունը խթանելու նպատակով համագործակցության եւ ցանցերի ստեղծման, ինչպես նաև տեղական ու ազգային հաստատությունների հետ կառուցողական համագործակցության կարևորությունը: Համաժողովի ընթացքում ԵԳԱ/ՀԳՀ անդամները մասնակցեցին հետևյալ թեմաներով ինտերակտիվ հանդիպում-սեմինարների. Բաղաքացիական մասնակցություն

ընդ Հայաստանում, Համայնքի բնակիչների ներգրավում, Առաջնորդություն/խմբի դիմամիտ, Ծրագրի կառավարում, Քաղաքացիական շահերի պաշտպանություն, Հանրայնության հետ կապեր, Տեղեկատվության ազատություն, Այլընտրանքային լրատվամիջոցների հասանելիություն, Համայնքի տեղեկագրերի կատարելագործում, Համագործակցություն տեղական իշխանությունների հետ եւ այլն: ԵԳԱ/ՀԳՀ անդամները նաև ըստ մարզերի ներկայացրեցին իրենց փորձը եւ հաջողված ծրագրերը: Համաժողովի ընթացքում տեղի ունեցավ «Բաց տարածություն» մեթոդով կազմակերպված միստ՝ «Քաղաքացիական մասնակցությունը Հայաստանում» թեմայով: Քաղաքացիական մասնակցության վերաբերյալ իրենց գիտելիքները հարստացնելուց հետո մասնակից-

ները աշխատեցին խմբերով՝ մշակելու Հայաստանում քաղաքացիական մասնակցության խոչընդոտների հարթահարման եւ քաղաքացիական ակտիվության խթանման ուղղված ռազմավարություններ: Համաժողովի ընթացքում գործում էր նաև ցուցահանդես, որտեղ բոլոր 80 ԵԳԱ/ՀԳՀ-ները ներկայացրել էին իրենց կողմից համայնքներում իրականացված աշխատանքները: ԵՅԳԾ համաժողովը հիանալի հնարավորություն էր Հայաստանում գործող ԵԳԱ/ՀԳՀ-ների ուժեղացման համար. այն ամրապնդեց նրանց միջև փոխադարձ կապը, խթանեց պաշտպանության փոխանակումը, ինչպես նաև մեծացրեց իրազեկությունը քաղաքացիական հասարակության զարգացման գործում համայնքապետ կառույցների ունեցած կարևոր դերի մասին:



Հայաստանում ԱՄՆ դեսպան Մարի Լ. Յովանովիչը բացման խոսքով դիմում է ԵՅԳԾ 2009թ. Համաժողովի մասնակիցներին

«Բաց պատուհան» իրավական աջակցություն Վերին Պողոնիում

Օգոստոսին, Վերին Պողոնիի ՀԳՀ-ն (Կոտայքի մարզ) իրենց գործունեության կենտրոնում հիմնեց «Բաց պատուհան» տեղեկատվա-իրավաբանական խորհրդատվության ծառայություն՝ համայնքի բնակիչներին անվճար տեղեկատվություն եւ իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու նպատակով: ՀԳՀ-ի այս նախաձեռնությունը կոչված է հասցեագրելու համայնքում տեղեկատվության եւ իրավական գիտելիքների պակասի խնդիրը եւ օգնելու համայնքի բնակիչներին ՀՀ օրենսդրության շրջանակներում լուծելու իրենց իրավական հարցերը եւ խնդիրները: Այս նախաձեռնության ներքո աշխատող ՀԳՀ անդամները համայնքի բնակիչ-

ներին անվճար խորհրդատվություն են տրամադրում՝ օգտվելով «ԻՐՏԵԿ» իրավական տեղեկատվական կենտրոնի իրավական բազայից: Օգոստոս ամսվա ընթացքում ՀԳՀ անդամները համայնքի բնակիչներին օգնեցին վերականգնել իրենց խախտված իրավունքները: Օրինակ՝ ՀԳՀ-ն օգնեց վերականգնել համայնքի բնակիչ՝ անվճար բուժօգնություն ստանալու իրավունքը, երկու բնակիչ ստացել են աջակցություն՝ սոցիալական ծառայության տարածքային գործակալության աղքատության ընտանեկան նպաստի դադարեցման հետ կապված նամակ-բողոքների պատրաստման եւ ուղարկման հարցում, դպրոցի աշակերտների

ծնողները ստացել են աջակցություն դպրոցում իրենց կողմից նկատված որոշակի օրինախախտումների վերացման, ինչպես նաև այդ հարցերի լուծման առաջարկով հղված նամակի պատրաստման գործում: Վերին Պողոնիի ՀԳՀ-ի՝ «Բաց պատուհան» նախաձեռնությունը դրական արձագանք է գտել համայնքի բնակիչների շրջանում, եւ ՀԳՀ-ն մտադրված է շարունակել այդ ծրագրի իրականացումը՝ բարձրացնելու համայնքում օրենքների վերաբերյալ իրազեկվածությունը եւ օգնելու համայնքի բնակիչներին իրենց իրավունքների պաշտպանության հարցում:

Այս համարում նաև

- Նախընտրական հանդիպում՝ կազմակերպված Մառնադբյուրի ԵԳԱ-ի կողմից 2
- Աշնակի ԵԳԱ-ի կողմից համայնքում կազմակերպված սեմինարներ 2
- Դիլիջանում նշվեց Երիտասարդների միջազգային օրը 2
- Մարտունու ԵԳԱ-ի նախաձեռնության շնորհիվ հրապարակվեց համայնքի բյուջեն 3
- Նոր Գեղի ԵԳԱ-ն ստեղծում է համայնքի ոստկալը 3
- Արծվանիկի ՀԳՀ-ն բարձրացնում է տարածաշրջանի էկոլոգիական խնդիրները 3
- ԵՅԳԾ համայնքների համագործակցություն. Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերի ՀԳՀ ներառված համաժողովների գործունեությունը (Շարունակությունը՝ 4-րդ էջին) 3

ԵՅԳԾ-ում ընդգրկված համայնքներ

- Ներկայումս հանրապետության տարածքում գործում է Երիտասարդական գործունեության 37 ակումբ եւ Համայնքի գործունեության 43 հանձնաժողով
- Ամենափոքր համայնքը Չոլվաշենն է, որն ունի 206 բնակիչ, իսկ ամենամեծը՝ Դիլիջանը՝ 16,202 բնակիչ
- Անցած հինգ տարիների ընթացքում ծրագրին մասնակցել է ավելի քան 2,000 կամավոր եւ իրականացվել է ավելի քան 1,700 քաղաքացիական նախաձեռնություն

*2001թ. մարտի ամսվա, <http://www.armsat.am>

Նախընտրական հանդիպում՝ կազմակերպված Սառնաղբյուրի ԵԳԱ-ի կողմից

Հուլիսին, Սառնաղբյուրի ԵԳԱ-ն (Շիրակի մարզ) կազմակերպեց համայնքի բնակիչների հանդիպումը գյուղապետի պաշտոնի թեկնածուների հետ, քանի որ գյուղապետը առողջական վիճակից ելնելով հրաժարվել էր պաշտոնից, և գյուղում տեղի էին ունենալու գյուղապետի արտահերթ ընտրություններ: Գյուղապետի պաշտոնի բոլոր թեկնածուները հրավիրված էին հանդիպմանը, որին մասնակցեցին մեծ թվով համայնքի բնակիչներ: Թեկնածուները ներկայացրեցին իրենց ծրագրերը և պատասխանեցին համայնքի անդամների հարցերին, որոնց մեծ մասը վերաբերվում էր թեկնածուների ապագա քայլերին, ծրագրերին, առաջադեմություններին, ինչպես նաև համայնքի ղեկավար դառնալու նրանց ցանկության շարժառիթներին: Համայնքի բնակիչների կարծիքով հանդիպումը շատ արդյունավետ էր և օգտակար, քանի որ ստացված տեղեկությունները

նրանց կօգնեն կայացնել ճիշտ ընտրություն և քվեարկել այն թեկնածուի համար, որն, իրենց կարծիքով, առավել համապատասխան է համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնելու համար: Հանդիպման ավարտին մասնակիցները շնորհակալություն հայտնեցին ԵԳԱ-ին մեծան հանդիպում նախաձեռնելու և կազմակերպելու համար: ԵԳԱ անդամներն իրենց վճռականությունը հայտնեցին շարունակելու աշխատել գյուղում արդար և թափանցիկ ընտրություններ ապահովելու ուղղությամբ և քաջալերեցին համայնքի բնակիչներին լինել ավելի ակտիվ, ավելի մանրամասն ծանոթանալ թեկնածուների ծրագրերին և ընտրությունների օրը քվեարկել այն թեկնածուի օգտին, որին նրանք առավել ունակ են գտնում զբաղեցնելու գյուղապետի պատասխանատու պաշտոնը և արդյունավետ աշխատելու համայնքի զարգացման համար:



Համայնքի բնակիչների հանդիպումը գյուղապետի պաշտոնի թեկնածուների հետ՝ կազմակերպված Սառնաղբյուրի ԵԳԱ-ի կողմից

Աշնակի ԵԳԱ-ի կողմից համայնքում կազմակերպված սեմինարներ

◆ Հուլիսին, Աշնակի ԵԳԱ-ն (Արագածոտնի մարզ) հրավիրել էր ԱՄՆ ՄԶԳ/Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագրի ներքո Թալիմուն հիմնադրված Շահերի պաշտպանության և աջակցության ընդունարանի ներկայացուցիչներին՝ համայնքի բնակիչներին՝ ներկայացնելու ընդունարանի գործունեությունը և մարզում իրականացվող հակակոռուպցիոն նախաձեռնությունները: ԵԳԱ-ի կողմից կազմակերպված սեմինարի ընթացքում ընդունարանի կամավոր՝ իրավաբան Եպրակսիա Խաչատրյանը մասնակիցներին մանրամասն տեղեկատվություն տրամադրեց շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների

գործունեության և կոռուպցիայի դեպքերի հետ կապված հարցերի լուծման համար բնակիչներին տրամադրվող անվճար աջակցության մասին: Մասնակիցները նաև քննարկեցին երկրում կոռուպցիայի նվազեցման հնարավոր ուղիները և շեշտեցին կոռուպցիայի դեմ պայքարում յուրաքանչյուր քաղաքացու ներգրավման կարևորությունը: Սեմինարի ընթացքում մասնակիցներն ստացան կարելու տեղեկություններ և էլ ավելի զարգացրեցին իրենց իրավունքները պաշտպանելու կարողությունը:

◆ Հուլիսի 30-ին, Աշնակի ԵԳԱ-ն կազմակերպել էր հանդիպում գյուղի դպրոցի աշակերտների հետ՝ նրանց ԵԳԱ-ի

առաքելությունը և գործունեությունը ներկայացնելու, ինչպես նաև աշակերտների հետ կամավորության, կամավոր աշխատանքի և համայնքի զարգացման գործում ներդրում ունենալու կարևորության թեմաները քննարկելու և երիտասարդներին ԵԳԱ-ին միանալու կոչ անելու նպատակով: Հանդիպման ավարտին աշակերտներից շատերը հայտնեցին ԵԳԱ-ին միանալու և ակունքի գործունեությանը մասնակցելու իրենց ցանկության մասին:

◆ Օգոստոս ամսին, շարունակելով իրավունքների վերաբերյալ համայնքի բնակիչների իրազեկվածության բարձրացման ուղղված իրենց գործունեությունը, Աշնակի ԵԳԱ-ն կազմակերպեց և

իրականացրեց «Ապառողների իրավունքներ» թեմայով սեմինար՝ աջակցելու գյուղի վաճառքի կետերում վաճառողների և գնորդների միջև ծագող վեճերի լուծմանը: Սեմինարի ժամանակ ԵԳԱ նախագահը մասնակիցներին ներկայացրեց սպառողների, խանութների սեփականատերերի և վաճառողների իրավունքները և պարտականությունները: ԵԳԱ անդամները վստահ են, որ սեմինարը օգնեց համայնքի բնակիչների համար պարզաբանել սպառողների իրավունքներին վերաբերող մի շարք հարցեր, և որ մոտ ապագայում գյուղում կնվազի սպառողների և վաճառողների միջև ծագող վիճաբանությունների թիվը:

Դիլիջանում նշվեց Երիտասարդների միջազգային օրը



Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառում՝ կազմակերպված Դիլիջանի ԵԳԱ-ի կողմից

Օգոստոսի 12-ին՝ ՄԱԿ-ի կողմից հռչակված՝ Երիտասարդների Միջազգային օրը, Դիլիջանի ԵԳԱ-ն (Տավուշի մարզ) կազմակերպել էր միջոցառում՝ համայնքի երիտասարդներին միավորելու և նրանց ակտիվությունը խթանելու, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կառուցման, երիտասարդների խնդիրների լուծման և երկրի զարգացման գործում երիտասարդների դերի վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով: ԵԳԱ անդամները քաղաքի կենտրոնական մասում փակցրել էին պաստառներ՝ երիտասարդների դերի վերաբերյալ և կազմակերպել էին երթ՝ քաղաքի կենտրոնով: Միջոցառման շրջանակներում իրականացվեց Երիտասարդների օրվա նշանակության վերաբերյալ ներկայացում, հնչեցին ելույթներ երիտասարդների՝ որպես ապագա առաջնորդների և հասարակության առաջընթացի շարժիչ ուժ,

դերի մասին, ինչպես նաև տեղի ունեցավ համերգ: Միջոցառմանը, որը վերածվեց երիտասարդական փառատոնի, մասնակցում էին մեծ թվով երիտասարդներ, տարբեր ՀԿ-ների և կրթական հաստատությունների ներկայացուցիչներ և այլք: Հանրությանը վերոհիշյալ միջոցառման և Երիտասարդների միջազգային օրվա մասին տեղեկացնելու նպատակով Դիլիջանի ԵԳԱ-ն դիմեց հանրային ռադիոյի «Լյուսեյ» երիտասարդական ծրագրին, որի շրջանակներում հեռարձակվեց հատուկ հաղորդում՝ ուղղված Երիտասարդների միջազգային օրվա նշանակության և երկրի զարգացման համար երիտասարդների դերի ու նրանց միավորված գործունեության կարևորության վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացմանը:



Մարտունու ԵԳԱ-ի նախաձեռնության շնորհիվ հրապարակվեց համայնքի բյուջեն

Մարտունու ԵԳԱ անդամները (Գեղարքունիքի մարզ) գյուղապետի հետ բազմիցս քննարկել էին համայնքի բյուջեի լուսաբանման և եկամուտների ու ծախսերի մասին տեղեկատվությունը գյուղի բոլոր բնակիչների համար հասանելի դարձնելու անհրաժեշտության խընդրը, սակայն նրանց չէր հաջողվել գյուղապետի հետ համաձայնության գալ այդ հարցի շուրջ: Օգոստոսին, ԵԳԱ անդամները որոշեցին այլ մոտեցում ցուցաբերել հարցին և նամակով դիմել գյուղապետին՝ համայնքի բյուջեի հրապարակման առաջարկով: Նամակում ԵԳԱ անդամները հղումներ էին կատարել Տեղական ինքնակառավարման և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքներին և մեջբերումներ էին ներառել օրենքների այն հոդվածներից, որոնք վերաբերվում են տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի բյուջեի և այլ հարցերի մասին բնակիչներին տեղեկատվություն

տրամադրելու պարտավորությանը, ինչպես նաև քաղաքացիների՝ իրենց փնտրած տեղեկատվությունն ստանալու իրավունքին: ԵԳԱ-ն նաև օրինակներ էր ներառել այլ համայնքներից, որտեղ գյուղապետերը կազմակերպել են բյուջեի բաց քննարկումներ և բյուջեի օրինակները փակցրել համայնքում: Նամակը ստանալուց հետո Մարտունու գյուղապետը հանդիպման է հրավիրել ԵԳԱ անդամներին, հավանություն տվել ԵԳԱ-ի առաջարկին և արտահայտել համայնքի բյուջեն հրապարակելու իր պատրաստակամությունը: Նա ԵԳԱ անդամներին առաջարկել է համագործակցել գյուղապետարանի մասնագետի հետ՝ բյուջեի հրապարակումը կազմակերպելու գործում: Նախաձեռնության արդյունքում Մարտունի համայնքի 2009թ. բյուջեն, կատարողականը, որտեղ արտացոլված էին եկամուտները և ծախսերը, բազմացվեցին և փակցվեցին գյուղի



Համայնքի բնակիչները ծանոթանում են համայնքի բյուջեին, որի օրինակները փակցվել են գյուղում Մարտունու ԵԳԱ-ի նախաձեռնության արդյունքում

մարդաշատ վայրերում: Համայնքի բնակիչները հաճելիորեն զարմանում էին՝ տեսնելով համայնքի բյուջեի վերաբերյալ տեղեկությունները բաց ներկայացված համայնքում, ծանոթանում էին փաստաթղթերին և տեղեկանում համայնքի բյուջեի միջոցներով 2009թ. գյուղում իրականացված

ծրագրերի մասին: ԵԳԱ-ն վստահ է, որ իրենց նախաձեռնությունը նպաստեց տեղական ինքնակառավարման մարմինների թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը և խթանեց համայնքի բնակիչների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում:

Նոր Գեղիի ԵԳԱ-ն ստեղծում է համայնքի ոստկայքը

Նոր Գեղիի ԵԳԱ-ն (Կոտայքի մարզ) մի քանի ամիս շարունակ աշխատում էր համայնքի ոստկայքի ստեղծման և ձեւավորման ուղղությամբ: Ոստկայքի ստեղծման գործընթացում համայնքի բնակիչներին ներգրավելու և կայքէջի ձեւավորման մեջ նրանց կարծիքները արտացոլելու նպատակով ԵԳԱ անդամները համայնքի բնակիչների հետ կազմակերպել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ, որոնց ընթացքում համայնքի անդամներին են ներկայացրել կայքէջի կառուցվածքը և համայնքի բնակիչների կողմից առաջարկված՝ կայքի բաժինները: Ոստկայքի ձեւավորումն ավարտելու պես, ԵԳԱ-ն համայնքի բնակիչների համար կազմակերպեց կայքի

շնորհանդեսը, որը տեղի ունեցավ սեպտեմբերի 18-ին, ԵԳԱ-ի գործունեության կենտրոնում: ԵԳԱ անդամները համայնքին ներկայացրեցին կայքէջը, որը պարունակում է հետևյալ բաժինները. «Գյուղապետարան» անվանումով բաժին, որտեղ նախատեսվում է փակցնել գյուղապետարանի հայտարարությունները և ավագանու որոշումները, «Լուրեր»՝ որտեղ փակցվելու են տեղական և միջազգային նորություններ, «Գրադարան»՝ որտեղ տեղադրվելու է համայնքում գործող երկու գրադարանների գրքերի ցանկը, «Հայտարարություններ» բաժին, որտեղ համայնքի բնակիչները կարող են տեղադրել հայտարարություններ, և «Երկխոսություն» բաժին, որտեղ համայնքի բնակիչները կարող են

տալ օրենքներին, իրավունքներին, տեղական իշխանությունների որոշումներին վերաբերող հարցեր և ստանալ պատասխաններ իրավաբաններից, որոնց հետ ԵԳԱ-ն պատրաստվում է համագործակցել այս նախաձեռնության շուրջ: Կայքէջը պարունակում է նաև ընդհանուր տեղեկություններ գյուղի, վերջինիս աշխարհագրական դիրքի և պատմության մասին: Համայնքի բնակիչները խորապես տպավորված էին այն աշխատանքից, որ ԵԳԱ-ն կատարել էր ոստկայքի ստեղծման համար, ինչպես նաև այն մոր հնարավորություններից, որ բացվում են ոստկայքի շահագործման հետ միասին: ԵԳԱ անդամները հանդիպման մասնակիցներին խնդրեցին տարածել ոստկայքի ստեղծման մասին ին-

ֆորմացիան և ոստկայքի հասցեն իրենց հարեաններին, ընկերներին և բարեկամներին, ինչպես նաև բոլորին բաժանեցին ոստկայքի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ: ԵԳԱ անդամները գտնում են, որ ոստկայքը համայնքի բնակիչների համար կծառայի որպես տեղեկատվության մատչելիության բարձրացման և ինֆորմացիայի փոխանակման գործիք և կնպաստի տեղական իշխանությունների հետ երկխոսության և համագործակցության զարգացման ու ամրապնդմանը:



Արծվանիկի ՀԳՀ-ն բարձրացնում է տարածաշրջանի էկոլոգիական խնդիրները

Տարածաշրջանում առկա էկոլոգիական խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով, օգոստոսին, Արծվանիկի ՀԳՀ-ն (Սյունիքի մարզ), համաձայնության գալով տեղական իշխանությունների հետ, գյուղ հրավիրեց տեղական լրատվամիջոցների, որպեսզի վերջիններիս միջոցով բարձրացնի գյուղի բնակիչներին հուզող հարցերը: ՀԳՀ-ի հրավերն ընդունվեց տեղական «Խուստուկ» հեռուստաընկերության լրագրողների կողմից, որոնք օգոստոսի 12-ին այցելեցին Արծվանիկի հանդիպելու ՀԳՀ-ի, համայնքի ղեկավարների և բնակիչների հետ: Հանդիպման ժամանակ ՀԳՀ-ն ներկայացրեց այն էկոլոգիական խնդիրները, որոնք առկա էին գյուղում՝ «Քաջարանի արձանաձևի լիբրենային գործարանի» արձանաձևի արտադրության ընթացքում մոտ գտնվելու պատճառով, և

որ այդ արտադրությունները վնասակար ազդեցություն ունեն ինչպես բուսական և կենդանական աշխարհի, այնպես էլ բնակչության առողջության վրա: Հանդիպմանը ներկա՝ գյուղի բնակիչները և արտահայտեցին հարցի հետ կապված իրենց մտահոգությունները, մասնավորապես՝ թե ինչ վնաս են հասցնում գործարանի արտադրությունները Արծվանիկի և հարեան գյուղերի բնակիչների առողջությանը: Հանդիպման տեսանյութը հեռարձակվեց մարզային հեռուստաընկերության էթեր: ՀԳՀ անդամները համոզված են, որ հաղորդումն օգնեց բարձրացնել իրազեկությունը խնդրի և շրջակա միջավայրը պաշտպանելու անհրաժեշտության վերաբերյալ և հուսով են, որ հարցը կգրավի մարզի իշխանությունների և բնապահպանական ՀԳՀ-ների ուշադրությունը և կորդի նրանց գործել՝ շտկելու վիճակը:

ԵՀԳԾ համայնքների համագործակցություն. Գեղարքունիքի և Վայոց ձորի ՀՀՍ ենթահանձնաժողովների գործունեությունը

ԵՀԳԾ համայնքների համագործակցության նախաձեռնության շրջանակներում ՀՀՍ հանձնաժողովը և մարզային ենթահանձնաժողովներն ակտիվորեն ներգրավված են եղել համայնքային և մարզային մակարդակներում առկա խնդիրների լուծման նպատակով տարբեր նախաձեռնությունների պլանավորման և իրականացման գործում:

◆ Դուլիսին, Գեղարքունիքի ՀՀՍ մարզային ենթահանձնաժողովը դրական պատասխան է ստացել իրենց կողմից Գեղարքունիքի մարզպետարան ներկայացված առաջարկին՝ առ այն, որ մարզային հեռուստաընկերությունների էթերով բնակչությանը մանրամասն տեղեկատվություն տրամադրվի պետության կողմից երաշխավորված՝ անվճար բուժապաստիկման վերաբերյալ, ինչը կնպաստի

համայնքներում տեղեկատվության պակասի խնդրի լուծմանը և կօգնի քաղաքացիներին պատասխանել իրենց իրավունքները: Հուլիսի 12-ին, տեղական հեռուստաընկերությամբ հեռարձակվեց հաղորդում, որի ընթացքում Գեղարքունիքի մարզպետարանի առողջապահության բաժնի վարչի պրն. Գուրգեն Դավթյանը ուղիղ էթերով ներկայացրեց պետության կողմից բնակչության համար երաշխավորված անվճար բուժօգնության և բուժապաստիկման մասին, անդրադարձավ առողջապահության ոլորտի խնդիրներին և պատասխանեց ստույգի անհրաժեշտ բնակիչների բազմաթիվ հարցերին: Պրն. Դավթյանը նաև կոչ արեց քաղաքացիներին իրենց խնդիրների լուծման համար գրավոր (Շարունակությունը՝ էջ 4)



Կրթությամբ զարգացման ակադեմիա
 Այգեժոր 10,
 0019 Երևան
 Հայաստանի Հանրապետություն

Հեռ.՝ (374 10) 225 636
 Ֆաքս՝ (374 10) 275 686
 Էլ փոստ՝ ycap@aed.am

Երիտասարդության եւ համայնքների գործողությունների ծրագիր



Academy for Educational Development

Մեր ուսուցիչներն են՝
<http://ycap.am>
<http://aed.am>

ԵՀԳԾ համայնքների համագործակցություն. Գեղարքունիքի եւ Վայոց ձորի ՀՀՄ Ենթահանձնաժողովների գործունեությունը

(Սկիզբը՝ էջ 3)

դիմել մարզպետարանի առողջապահության բաժնի եւ խոստացավ դրանց համապատասխան լուծում տալ: Գեղարքունիքի մարզային ենթահանձնաժողովի նախաձեռնությամբ զգալիորեն նպաստեց անվճար բուժօգնության եւ բուժ-սպասարկման վերաբերյալ բնակչության իրազեկվածության բարձրացմանը, ինչն, իր հերթին, կնպաստի նաեւ քաղաքացիների իրավունքների կիրառման եւ պաշտպանման մակարդակի բարձրացմանը:

◆ Վայոց ձորի ՀՀՄ մարզային ենթահանձնաժողովը, հուլիսին, ամփոփելով մարզի ԵՀԳԾ 8 համայնքներում անցկացված՝ դպրոցների խնդիրների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, կազմակերպեց հանրային քննարկում՝ «Վայոց ձորի գյուղական դպրոցների հիմնախնդիրները» թեմայով: Հանրային քննարկումը կազմակերպելու համար ենթահանձնաժողովի անդամները համագործակցել են բոլոր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների, այդ թվում՝ Վայոց ձորի մարզպետարանի, գյուղապետարանների, դպրոցների տնօրենների եւ աշակերտների հետ, եւ համաձայնության են եկել քննարկման անցկացման ամսաթվի, ժամի եւ վայրի վերաբերյալ: Հանրային քննարկու-

մը տեղի ունեցավ հուլիսի 10-ին, Վայոց ձորի մարզկենտրոն Էղեգնաձորում: Քննարկմանը մասնակցեցին մարզի տարբեր համայնքների բնակիչներ, հարցի հետ առնչվող կառույցների ներկայացուցիչներ: Մասնակիցների թվում էին նաեւ Վայոց ձորի մարզպետարանի Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, Տարածքային վարչության պետ Արամ Գրիգորյանը, Վայոց ձորի՝ ԵՀԳԾ 8 համայնքների գյուղապետերը եւ դպրոցների տնօրենները, այլ դպրոցների, ՀՀ-ների, ինչպես նաեւ ԱՄՆ ՄՁԳ եւ ԿՁԱ ներկայացուցիչներ: Քննարկումը բացեց Վայոց ձորի մարզպետարանի Կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Արփիար Ղազարյանը, ով հակիրճ ներկայացրեց մարզի գյուղական դպրոցների իրավիճակը, ինչից հետո ներկայացվեցին Վայոց ձորի ՀՀՄ ենթահանձնաժողովի կողմից մարզի 8 համայնքներում իրականացված հարցման արդյունքները: Համաձայն ստացված արդյունքների՝ մարզի դպրոցների մեծ մասում առկա են ջրի, սանհանգույցների, բուժետի բացակայության, ջեռուցման հետ կապված, ինչպես նաեւ որոշ առարկաների գծով որակյալ մասնագետների պակասի խնդիրներ: Ընդհանուր խնդիրների քննարկումից հետո դպրոցի

ԵՀԳԾ-ն ԱՄՆ ՄՁԳ կողմից ֆինանսավորված ծրագիր է, որն իրականացվում է Կրթությամբ զարգացման ակադեմիայի (ԿՁԱ) կողմից: ԵՀԳԾ հիմնական նպատակն է **ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր համայնքում սերմանել անհատի կամ անձանց խմբի՝ որպես հանրային շահերի պաշտպան ծառայելու գաղափարը եւ դրա կարելությունը:**

Ծրագրի երեք հիմնական բաղադրիչներն են.

1. Ստեղծել մեխանիզմներ, որոնց միջոցով կխթանվի երիտասարդների եւ համայնքների այլ անդամների մասնակցությունն իրենց համայնքներում հանրային հարցերի լուծման գործընթացին՝ աջակցելով համայնքներում երիտասարդության, համայնքային եւ հանրային խնդիրների լուծմանը զբաղվող երիտասարդական գործունեության ակունքների (ԵԳԱ) եւ Համայնքների գործունեության հանձնաժողովների (ՀԳՀ) հիմնադրմանը:
2. Ավելացնել երիտասարդների եւ համայնքների այլ անդամների՝ քաղաքացիական ակտիվության բարձրացման եւ հանրային հարցերի լուծման գործընթացում ավելի ակտիվ մասնակցելու համար անհրաժեշտ գիտելիքները/հմտությունները՝ երիտասարդներին եւ համայնքի այլ անդամներին տրամադրելով հնարավորություններ, որոնք կօգնեն բարձրացնել նրանց իրազեկությունը, հարստացնել գիտելիքները եւ զարգացնել հմտությունները, որոնք անհրաժեշտ են երիտասարդությանը, համայնքի այլ անդամներին եւ հանրությանը հուզող խնդիրները հաջողությամբ լուծելու համար:
3. ԵԳԱ/ՀԳՀ-ներն իրականացնեն ծրագրեր, որոնք կբարձրացնեն քաղաքացիական ակտիվությունը եւ մասնակցությունը, կբխեն հանրության եւ համայնքի շահերից, կնպաստեն համայնքներում հանրային հարցերի լուծման գործում սիստեմատիկ բարեփոխումների իրականացմանը եւ կխթանեն համայնքի կարիքների լուծման համար ավելի կայուն մոտեցումների որդեգրումը:

տնօրենները ներկայացրեցին իրենց դպրոցներում առկա խնդիրները, դրանց լուծման ուղիները եւ անհրաժեշտ քայլերը: Հանդես եկան նաեւ գյուղապետերը, որոնք համաձայնության եկան գյուղական դպրոցների խնդիրների լուծման գործում ջանքերի միավորման անհրաժեշտության հարցում, ինչպես նաեւ նշեցին, որ բարձր են գնահատում ԵՀԳԾ խմբերի կողմից իրենց համայնքներում իրականացվող գործունեությունը եւ արտահայտեցին իրենց պատրաստակամությունն ապագայում եւս համագործակցել ԵԳԱ/ՀԳՀ-ների հետ եւ աջակցել համայնքներում կյանքի որակի բարելավմանն ուղղված նրանց նախաձեռնություններին: ՀՀ-ների ներկայացուցիչները եւ քննարկման այլ մասնակիցները եւս արտահայտեցին մարզի գյուղական դպրոցների հիմնախնդիրների եւ դրանց լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ իրենց տեսակետները եւ հաստատեցին այդ խնդիրների լուծման գործընթացին աջակցելու իրենց պատրաստակամությունը: Մասնակիցների կարծիքով հանրային քննարկումը շատ արդյունավետ էր եւ այն կնպաստի մարզի գյուղական դպրոցներում առկա խնդիրների լուծման համար կառուցողական համագործակցության ստեղծմանը: Վայոց ձորի ՀՀՄ ենթահանձնաժողովը հանձնված է, որ իրենց կողմից կազմակերպված հանրային քննարկումը կծառայի որպես առաջին քայլ՝ մարզի գյուղական դպրոցների հիմնախնդիրների լուծման եւ գյուղական դպրոցներում ուսումնական առավել արդյունավետ դարձնելու հարցում բոլոր շահագրգիռ կողմերի հետագա գործունեության համար:



«Մարզի գյուղական դպրոցների հիմնախնդիրները» թեմայով հանրային քննարկում՝ կազմակերպված Վայոց ձորի ՀՀՄ մարզային ենթահանձնաժողովի կողմից